մեհենին ի լայնածոց վիրապի շարունակ շառաչէ սոսկալի հուր, ուր արկեալ զդի մեռելոց իւրեանց լուծանեն ի փոշի, ըստ սովորութեան Հայրենի կրօնից իւրեանց։ Մերձ որոյ գոյ օդտլի խոր ջրհոր. ի վերայ որոյ արկանեն զձորձ ինչ քանի մի վայրկեան, և ապա հուր հարեալ ի նմա զօրէն շանթառաք թնդանօթի՝ շառաչմամբ դղրդէ զվայրն և դադարի . . . ։

«Ժամանակ պաշտամանց ձգի ոչ աւելի քան զքառորդ ժամ, և ի վախճան երգոցն՝ քրմապետն շրջէ զխնկանոցն ընդ օդս և դադարի։ Ունին զուրթն կուռս, զորս և պաշտեն. ևն»։

Բաղու քաղաքի շրջակայից առատ բերքերն են նաւթը, որ յայտնի է ամբողջ ռուսաստանին, պարսկաստանին և համարեա ամենայն եւրոպիոյ. ինչպէս վերեւը գրել եմ, իսկ մասնաւոր բերքերն են քրքումն (զաֆրան) խաղող, սեխ, ձմերուկ և ամենայն ծառապտուղ՝ որ գտնվում են Բաղուի շրջակայ գիւղերումն՝ որք են, Բգօվնայ, Մաշտաղ, Շաւալան, Մարտաքեան, եւայլն Աշերօնեան թերակղզոյ վրայ։

Բաղուն հարուստ է նաեւ բարոյական բերքերով, այն է՝ 1) Հայոց և Ռուսաց եկեղեցիքն. 2) ունի Մարդասիրական ընկերութիւն Հայոց հաստատուած յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. 3) երկսեռ արքունի և եկեղեցական քանի դպրոցներ ստորին, միջին և բարձր դասարաններով. 4) ազգային Աղքատանոց. 5) Գրադարան-ընթերցարան հասարակաց. 6) Թատրոն հասարակաց, և ամենայն ինչ որ քաղաքի վայել է։

Բաղուի վաճառականութիւնը, արհեստը եւայլն նոյն է, ինչ որ ամենայն բարեկարգ քաղաքներում կան. Բաղուի ամենամեծ պակասութիւնը միմիայն խմելու ջուրն է, որոյ համար քանի տարի է Բաղուի քաղաքական վարչութիւնը (դուման) աշխատում է խորհելով և խօսելով, որ Կուր գետիցը ջուր բերել տայ. տեսնենք երբ։ Ասուած տայ, որ շուտ բերեն ջուրը, և լրացնեն քաղաքի այս մեծ պակասութիւնը։